


ԱՆԱՍՈՒՆՆԵՐ

ԱՆԱՍՈՒՆՆԵՐՈՒ ԵՌԻՄՔԵՐԸ

Անասունները կրնանք դասակարգել երկու մեծ խումբերով: Ոսկոր ունեցող անասուններ, զորս կը կոչենք ողնաւոր եւ ոսկոր չունեցող անասուններ, զորս կը կոչենք անողն:



Ի՞նչ կը ներկայացնէ այս պատկերը:

Անասունին ոսկորները իրարու միացած ենմիջոցով:

Ամբողջացո՛ւր.

Շունըներու խումբին կը պատկանի, իսկ քիթեռնիկըներու խումբին:



Տո՛ւր հինգ ողնաւոր անասուններու անուն եւ երեք անողն անասուններու անուն:

.....,,,,
.....,,,

ՈՂՆԱԽՈՐՆԵՐ

Ողնաւոր անասունները իրենց կարգին կրնանք դասակարգել բազմաթիւ խումբերով: Այդ խումբերն են:

- 1.— Ստնաւորներ
- 2.— Թռչուններ
- 3.— Չուկեր
- 4.— Սողուններ
- 5.— Գորտազգիներ (երկակենցաղներ)



Գորտ




Կրիայ



Աղաւնի



Չուկ



Կատու

Տուփիկին մէջ գրէ խումբին թիւը:

ՍՏԱՆԱԻՈՐՆԵՐ

Ստնաւորները կենդանաձին անասուններ են: Ստնաւոր անասունները իրենց ձագերը կը սնուցանեն իրենց կաթով, մինչեւ ձագերուն մեծնալը:



Կարգ մը ծովային անասուններ ինչպէս կէտը եւ դլփինը նոյնպէս ստնաւորներ են: Ուրեմն սխալ է ըսել կէտ ձուկ, քանի որ ձուկերը ստնաւորներ չեն: Սառուցեալ ծովերուն եգերֆները կ'ապրին փոկերը, որոնք նոյնպէս ստնաւորներ են:



Յամաֆի վրայ ապրող անասունները ունին չորս անդամներ:

Ձին, էշը, ջորին եւ վագերաձին սմբակաւորներ են:

Սմբակաւորներու ոտները ունին միայն մէկ եղունգ:

Կովը, ոչխարը, այծը, ուղտը, ընձուղտը, եղնիկը եւ եղջերուն կնդակաւոր են:

Կնդակաւորներու ոտները ունին երկու-փական եղունգ:

Վագրը, յովագրը, առիւծը, գայլը, շունը եւ կատուն մատնագնաց անասուններ են, անոնց մատները ունին զօրաւոր ճակեր:

Մատնագնաց անասունները իրենց թաթերուն ծայրերուն վրայ ֆանի[®] մատ ունին:



Սմբակաւոր, կնդակաւոր ու մատնագնաց անասունները չորֆոտանիներ են:

ԹՈՂՈՒՆՆԵՐ

Թռչունները ունին երկու ոտներ եւ երկու թևեր: Անոնք կը փալեն երկու ոտքի վրայ, իսկ իրենց լայն թևերուն շնորհիւ կը բացան թռչիլ ու սալանիլ:



Թռչուններուն ոտները օժտուած են մատներով, որոնք նանկեր ունին:

Կան թռչուններ, որոնց ոտներու մատները մաշկով մը իրարու միացած են: Այս խումբի պատկանող թռչունները կը կոչուին մաշկոտանիներ:

Ասոնք լողացող թռչուններ են, իրենց ոտները թիի դեր կը կատարեն:

Բադր, սագր, կարապր եւ հաւալուսինը (փելիֆանը) մաշկոտանիներ են:





ԿԱՐԱՊՆԵՐՈՒ ԶՈՅԳԸ ԵՒ ԻՐԵՆՑ ԶԱԳԵՐԸ

Թռչունները ձուածին են. անոնք բոլորն ալ ձու կ'ածեն եւ իրենց ձագերը այդ ձուերէն կ'ելլեն, որոշ ժամանակ մը ետք:



ՀԱԻԸ

Հաւը երկու ոտքի վրայ կը քայլէ: Ան իր թեւերն ալ կը գործածէ: Երբ վագելով փախչիլ ուզէ՝ հաւը իր թեւերը կը բանայ եւ կը տարածէ: Թառեւում համար, անիկա թեւերը ուժգին կը քափահարէ: Հաւը ծանրօրէն կը թռչի:





ՀԱԻԿԻԹՆԵՐԸ

Թռչուններու ձուերը կը կոչենք նաեւ հաւկիթ, թէեւ նախընտրելի է այս անունը տալ հաւին ձուերուն միայն:





Թարմ հաւկիթ մը ուշադրութեամբ դիտենք: Անոր դեղնուցին փակած է ներմակ փոքր մաս մը՝ սաղմը: Սաղմն է, որ նուտիկի պիտի վերածուի: Երբ հաւը իր հաւկիթներուն վրայ թուխսի նստի, սաղմը կը սկսի անիլ հաւի մարմնին ջերմութեան ազդեցութեան տակ: Սաղմը իր սնունդը կ'առնէ հաւկիթին դեղնուցէն եւ ներակուցէն: Հաւկիթին կեդեր ունի շատ մանր ծակտիկներ. այդ ծակտիկներէն օդը ներս կ'անցնի եւ սաղմը կը շնչէ: Հետզհետէ մեծնալով սաղմը նուտիկի կը վերածուի: Ճուտիկը հաւուն օգնութեամբ կեդեր կը կտորէ եւ դուրս կ'ելլէ:

Դեղին ներկէ՛ այն ձեւը, որ հաւկիթի կը նմանի:
 Ի՞նչ կը կոչենք այդ ձեւը:



Ամբողջացո՛ւր. (դեղնուց, ներսկուց, սաղմ, ծակտիկ, կեղեւ)



Ներկէ՛:

սմբակաւոր

Կարմիր

մաշկոտանի

Կանաչ







կնդակաւոր

Կապոյտ

մատնագնաց

(նանկ ունեցող)

Գեղին





ՁՈՒԿԵՐ

Ձուկերը ձուածին անասուններ են, անոնք մեծ թիւով ձու կ'ածեն: Մայր ձուկերը իրենց ածած ձուերով եւ անոնցմէ ծնելիք ձկնիկներով շեն հետաքրքրուիր: Ձուկը իր լողակներուն շնորհիւ դիրութեամբ կը լողայ:

ՍՈՂՈՒՆՆԵՐ


Սողունները ձուածին անասուններ են: Գլխաւոր սողուններն են մողէզը, օձն ու կրիան:

Սողունները ձմեռ ատեն խոր ֆունի մէջ կը մտնեն, մինչեւ որ գարունը գայ: Ասոր համար անոնք նաեւ կը կոչուին ձմեռնող անասուններ:



ԵՐԿԱԿԵՆՑԱՂՆԵՐ (Գորտագգիներ)

Գորտն ու գորտագգիները *երկակենցաղ* անասուններ են, անոնք կ'ապրին ջուրի մէջ եւ ցամաքի վրայ: Երկակենցաղները ձուածին անասուններ են: Գորտը իր ձուերը կ'ածէ լնակներու կամ նահիւններու ջուրին մէջ: Այդ ձուերէն դուրս կու գան ձուկերուն բաւական նման փոքր կենդանիներ *շերեփուկները*: Շերեփուկները ունին խոշոր գլուխ մը եւ երկար ու տափակ պոչ մը: Անոնք հետզհետէ կերպարանափոխուելով գորտերու կը վերածուին:



Ամբողջացո՛ւր.

- | | |
|----------------------------------|------------------------------------|
| <input type="radio"/> 1 ընձուղտ | <input type="radio"/> ձուածին |
| <input type="radio"/> 2 կէտ | <input type="radio"/> ստնաւոր |
| <input type="radio"/> 3 էջ | <input type="radio"/> մատնագնաց |
| <input type="radio"/> 4 գայլ | <input type="radio"/> մաշկոտանի |
| <input type="radio"/> 5 քիթեռնիկ | <input type="radio"/> 9 երկակենցաղ |
| <input type="radio"/> 6 կարապ | <input type="radio"/> կնդակաւոր |
| <input type="radio"/> 7 հաւ | <input type="radio"/> ձմեռնող |
| <input type="radio"/> 8 կրիայ | <input type="radio"/> անողն |
| <input type="radio"/> 9 գորտ | <input type="radio"/> սմբակաւոր |

ԱՆՈՂՆ

Անողն անասունները կը բաժնուին զանազան խումբերու, գլխաւորներն են՝

- 1.— Միջատները
- 2.— Որդերը
- 3.— Թուլամորթները
- 4.— Խեցեմորթները

ՄԻՋԱՏՆԵՐԸ

Ամենէն օգտակար միջատները մեղունն են շերամն են: Մեղուն մեզի կու տայ համեղ եւ սննդարար մեղր: Շերամը մետաքս կ'արտադրէ:

Կան նաեւ վնասակար միջատներ, ինչպէս նաննն ու մժեղը:

Միջատներու կերպարանափոխումը

Միջատները իրենց կեանքի ընթացքին կ'անցնին երեք տարբեր ձեւերէ: Մայր – միջատին ամառ ձուէն դուրս կու գայ փոքրիկ *թրթուրը*: Թրթուրը քանի մը շաբաթ ապրելէ ետք խոր քունի մէջ կը մտնէ. քնացած շրջանին կը կերպարանափոխուի եւ կը վերածուի *հարսնուկի*: Հարսնուկն ալ իր կարգին որոշ ժամանակ մը ետք կատարեալ միջատ կը դառնայ: Անկէ ետք միջատը այլեւս չ'անիր:



ՈՐՆԵՐԸ

Որդերը չեն կերպարանափոխուիր, միջատներուն նման:

Երկրամայր կոչուած որդը կ'ապրի հողին մէջ. ան գետնին տակ երկար նրբանցքներ կը փորէ: Անոր մարմինը կազմուած է մեծ թիւով օղակներէ. գլուխը եւ իրանը իրարմէ կարելի չէ զանազանել:




ԹՈՒԼԱՄՈՐԹՆԵՐԸ

Խիսունջը թուլամորթ մըն է:



ԽԵՅՏՄՈՐԹՆԵՐԸ

Խեցգետինն ու խեչափառը խեցեմորթներ են:



Խեցգետինը խեցեմորթներու տիպարը կը նըկատուի. խեցեմորթները ընդհանրապէս ունին համեղ միս մը:

Հասցո՛ւր անասունը իր ձագին:

